

ՊԵՆԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԻՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԻՍ

Խմբագրության կողմից

Ռ. Հ. Մանուկյանի և Լ. Վ. Շտիսովայանի ներքո հրապարակվող հաղվածներով «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագրի» (տեխնիկական գիտությունների սե-
րիա) խմբագրությունը սկսում է Գիտությունների ակադեմիայի ԽՀԽ-ի
կողմից հրատարակված «Խուս-Պայերեն» պոլիտեխնիկական բառարանի
ընթացիկ մասը:

Խմբագրությունը խնդրում է մասնագետներին մասնակցել բառարանի
ընթացիկ մասը: Հայերեն տեխնիկական տերմինոլոգիայի հարցերին նվիրվող
մաքերի փոխանակությունը անց է կացվում բնակարանային հարցերը «Խուս-
Պայերեն» պոլիտեխնիկական բառարանի» երկրորդ հրատարակության մա-
սնակ սզագործելու նպատակով:

Ռ. Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՌԻՍ-ՀԱՅԵՐԵՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՆԻՍԱՆԸ

Թեև հայերը միայն արդեն ունեն գարգաղման բարձր մասնագետի հա-
տած գիր ու գրականություն, բայց նախաստիպատկան շրջանում մեր լեզուն,
Հայաստանի հետամնաց տնտեսական պայմանները հետևանքով ախրան ուղ-
քատ էր տեխնիկական տերմիններով, որ խոսք անցում չէր կարող լինել պո-
լիտեխնիկական բառարան ունենալու մասին: Բայց սեուլուցիայից հետո բն-
կած 37 տարիների ընթացքում Հայաստանի գիտություններն ու տեխնիկայի ան-
նախընթաց վերելքի հետևանքով մեր արևում արդարև բառարան ունենալու
պահանջը դարձել է անհատական: Բառարանը անհրաժեշտ է ամենուրեք՝
բարձրագույն ու միջնակարգ տեխնիկական ուսումնական հաստատություննե-
րում, տեխնիկական գրականության թարգմանության ու սզագործման հա-
մար, գործարաններում ու շինարարական հիմնարկներում, մամուլում և հայ
լեզվի կուլտուրան բարձրագույնում համար: Բառարանը պետք է դառնա հայ
տեխնիկական լեզվի կազմակերպիչը:

Այս նպատակով է հրատարակված «Խուս-Հայերեն» պոլիտեխնիկական
բառարանը: Բառարանը կազմելու աշխատանքներին մասնակցել է մեր ԽԽ-
պուրիկայի աշխի ընկնող գիտական աշխատակիցների և շինարար մասնա-
ղանների մի լազմանցում կոլեկտիվ: Բառարանի լույս տեսնելը բացառիկ կա-
րևորություն կրելով է մեր լեզվի հետագա զարգացման համար:

Ապալին բառարանում կան մի շարք թերություններ, որոնց մասին
պետք է ստանձին խոսել:

* «Խուս-Հայերեն» պոլիտեխնիկական բառարան, ՀՍՍՌ Գիտությունների ակադե-
միայի հրատարակություն, Երևան, 1957

Այսպես, որինակ, թարգմանելով ВНЕШНЯЯ բառը, բառարան կազմողները փրկվեցին մեծամասնական տերմինների մեջ աչք գրում են վերլուծություն, իսկ քիմիական տերմինների մեջ՝ անալիզ։ Հարց է առաջանում, մի՞թե քիմիական անալիզը վերլուծություն չէ։ Վերլուծություն բառը, որը հաճախ չափով ճիշտ է և քիմիական և մաթեմատիկական տերմինների մեջ, պետք է լինի ВНЕШНЯЯ բառի միակ թարգմանությունը։

Նույն ձևով պետք է հրաժարվել ФОРМУЛА բառի ֆորմուլա թարգմանությունից, թույնելով միայն բաճառի թարգմանությունը, որը ճիշտ է և կիրառելի բոլոր դեպքերում։

Ղեկավարվելով ИИИВ՝ Գ.Ա. Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած աչք սկզբունքով, որ յուրաքանչյուր տերմին պետք է արտահայտի միայն մի առարկա կամ հասկացություն, բառարան կազմողները բոլոր տեխնիկական գիտյալայինների անվանումների մեջ հրաժարվել են ТЕОРИЯ բառի տևալայուն թարգմանությունից (առաձգականության թեորիա, կառուցվածքների թեորիա և այլն), սակայն արտահայտել տեսական մեխանիկայի չի դարձել թեորետիկական։ Պետք է հաշվի առնել, որ Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքը կարող է վերաբերել միայն նեղ մասնագիտական տերմիններին։

Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքները պետք է կիրառել շատ մեծ պաշտոններում։ Բայց և հասկացությունները երբեք չի կարելի նույնացնել։ Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր բոս ընդհանրացնում է մի բանի հասկացություններ։ Բայց ընդհանրացման չափը տարբեր է տարբեր բաների համար և փոփոխվում է լեզվի ու մտքի զարգացման տարբեր շրջաններում։ Ինչքան ավելի բարձր է կոնցնած մարդը, որքան ավելի զարգացած է նրա միտքը, այնքան ավելի մեծ են միևնույն բառի միջոցով տարբեր հասկացություններ ընդհանրացնելու նրա հնարավորությունները։ Այսպիսով, Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքների անդգույշ կիրառումը որոշ դեպքերում ոչ թե կհարստացնի մեր լեզուն, ինչպես կարող են մտածել որոշ մասնագետներ, այլ ընդհակառակը, այն կիջեցնի զեպի զարգացման ավելի ցածր աստիճանը։

Ինչպատի առնելով վերն տվածը, մենք համարում ենք, որ տևալայուն բառը պետք է միայն հայերեն լեզվում իր նախկին իմաստով, թեև այն բառեր են թարգմանվում է ТЕОРИЯ և ОБЗОР բառերով։ Ղեկավարվելով Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած սկզբունքներով, հարկ կլինի փոխել սուսերեն համարյա բոլոր բառերը, որովհետև հայերեն թարգմանելիս նրանք զեպյի մեծամասնության համար արտահայտում են մեկից ավելի միտք (որինակ՝ область բառը թարգմանվում է բնագավառ, մարդ, արևույշ, ձագ բառը՝ փակեր, կապիկ, միացք, փակեց և այլն)։

Составной տերմինը составная արտահայտություն մեջ թարգմանվում է բաղադրյալ հեծան, իսկ вая составной արտահայտության մեջ՝ կազմովի լիսն։ Թեև և՛ բաղադրյալ և՛ կազմովի տերմինները հաճախ չափով ճիշտ են составной բառը թարգմանելու համար, բայց կազմովի բառը ավելի շատ է օգտագործվում, աստի և այն պետք է թողնել որպես составной բառի միակ թարգմանություն։

Пролет տերմինը թարգմանելիս մինչև այժմ կիրառվող և լայն տարածում առաջացած լրիշ բառը համարվել է սխալ և փոխարինվել է ղևամեջ,

աչք, լայնություն, լիմբ, բացվածք, կանգամնք **բառերով** Հենց միայն աչք հանդամանքը, որ մեկ լույսը տեղմինի փոխարեն բառարան կազմողները մտցրել են լից նոր տեղմին, արդեն խոսում է լույսը տեղմինի օգտին: Ահա չենք կարող համաձայնվել որովհետեւ համար բառարանում արված աչք և բացվածք թարգմանությունների հետ: Այս թարգմանությունները ավելի ճիշտ են համապատասխանում գերմաներէն բառին և արված են քննարկիւող բառարանում: Չպետք է անտեսել և աչք հանդամանքը, որ արդեն երևաւ ոտքի է, որ լույսը տեղմինը օգտագործում է մեր տեխնիկական գրականություն մեջ և համապատասխան է գտել առանց բացատրության բոլոր շինարար մասնագետների մաս: Բառարան կազմողների գրությունն ավելի միմիարական կլինեն, եթե մի աչք տեղ, **вместе с тем** արտահայտությունը թարգմանելու նրանք ստիպված չլինեն դիմել նույն լույսը տեղմինին, այդ արտահայտությունը թարգմանելով՝ ամբարձիչի սլաքի արապիւնը:

Концентрация բառի թարգմանություն համար արված է կոնցենտրացում և կոնցենտրացիա բառերը, սակայն մի աչք տեղ **атомная концентрация** արտահայտությունը թարգմանված է միանվածքի ատոմային խտացում: Այն հանգամանքի հետևանքով, որ առանձին բառերի և արտահայտությունների թարգմանությունները արված են մասնագետների տարրեր խմբերի կողմից, բնականաբար հնարավոր էր միեւնոյն բառի տարրեր թարգմանություններ տարրեր խմբերի տված թարգմանությունների մեջ: Բառարան մշակողների և խմբագրողների պարտականությունների մեջ էր մտնում ստեղծել տարրեր արտահայտությունների մեջ միեւնոյն տեղմինի թարգմանությունների միասնականություն: միշտ է, այս ուղղությամբ նրանց կողմից որոշ աշխատանք կատարված է, բայց, իհարկե, նրանց կատարած աշխատանքը դեռ հեռու է կատարելությունից:

Кессон տեղմինը թարգմանված է ճաշերեն սուզարկղ տեղմինի միջոցով, բայց **кессонная болезнь** արտահայտությունը թարգմանված է կոստոյին հիվանդություն: Հարց է առաջանում, եթե բառարանի հեղինակները սուզարկղ տեղմինը համարում են ճիշտ, ապա ինչու՞ աչք բոլոր դեպքերում չեն կիրառում:

Նույնը կարելի է ասել և **компрессор** բառի թարգմանության մասին: Այդ բառի համար բառարանում արված է ճնշակ թարգմանությունը, սակայն **компрессорный двигатель** արտահայտությունը թարգմանված է կոմպրեսորային զիգեր:

Нагель բառի համար արված է բախվածին տնայնոց փայտամեխ թարգմանությունը: Փարտե մեխը, ինչպես և ամեն մի մեխ, իհարկե **нагель** է, բայց **нагель**-ը միայն փայտամեխ չէ: Որինակ, բառարան կազմողները փայտամեխ տեղմինի օգնությամբ ինչպես կթարգմանեն **стальной цилиндрический нагель** արտահայտությունը: Խիստ տեղ, **пластинчатый нагель** արտահայտությունը թարգմանված է քլթիկնոտիկա: Այսպիսով, **нагель** բառի համար այսուհի արդեն արված է բոլոր թարգմանությունը: **Контрбашня кабельного крана** արտահայտությունը թարգմանված է կաբելային ամբարձիչի հակաշարժակ, իսկ **кабельный кран** արտահայտությունը՝ կաբելավոր ամբարձիչ: Հարց է առաջանում, երբեք տեղմիններից որն է ավելի ճիշտ, կարելավոր ամբարձիչը, թե կաբելային ամբարձիչը:

Балка жесткости արտահայտությունը թարգմանված է կոշտարար հեծանք.

խակ ферма жесткости արտահայտությունը՝ կոշտության ֆերմա: Ավելի ճիշտ է երկրորդ թարգմանությունը:

Ферма прочная сквозная արտահայտությունը թարգմանված է բուփանից կամարային ֆերմա, իսկ most со сквозными фермами արտահայտությունը՝ վանդակավոր ֆերմաներով կամարից: Այս երևույթին բառարանից օգտվողներին է թողնված որոշել сквозная ферма արտահայտության ճիշտ թարգմանությունը:

Вода грунтовая և вода почвенная երկու արտահայտություններն էլ թարգմանված են հալերեն գետնաջուր տերմինի միջոցով, բայց մի այլ տեղ инфильтрация грунтовых вод արտահայտությունը թարգմանված է ստորերկրյա ջրերի ներծծում: Միևուցե ավելի ճիշտ կլինեք грунтовые воды արտահայտությունը թարգմանել ստորերկրյա ջրեր, իսկ գետնաջուր տերմինը թողնել որպես почвенная вода արտահայտության թարգմանություն:

Площадка տերմինը բառարանում ամենուրեք թարգմանված է հարթակ, որը և հանդիսանում է այդ բառի ընդունված ու ճիշտ թարգմանությունը, սակայն норма к площадке, внешняя արտահայտությունը թարգմանված է՝ մակերևույթի արտաքին նորմալ: Площадка բառի մակերևույթի թարգմանությունը միանգամայն սխալ է:

Բայց սրանով չեն սահմանափակվում բառարանի լեզուի բառերը: Լեզուն ստեղծվում է մտորողի կողմից ավելի կամ պակաս երկար ժամանակամիջոցում: Իրա համար էլ պետք է կարողանալ ճիշտ պատգարծել ստեղծված բառականին հարուստ հարկադրեց տեխնիկական տերմինաբանության: Սակայն բառարան կողմողները մի քանի զեպքերում խախտել են այդ սկզբունքը:

Օրինակ, неразрезная բառը неразрезная балка, неразрезная ферма և այլ արտահայտությունների մեջ մինչև բառարանի լայն տեսակը թարգմանվում էր չխզված: Բառարան կազմողները որոշել են փոխել неразрезная բառի այն ճիշտ թարգմանությունը և այն դարձրել են անխզովի:

Полупотайная закладка արտահայտությունը մինչև այժմ թարգմանվում էր կիսաքարնված զամ, բառարանում այն փոխարինված է կիսաքարնովի զամ արտահայտությամբ, որը սխալ է: Ճիշտ նույնպես полотка, потайная արտահայտության ճիշտ լարնված գլխիկ թարգմանությունը փոխարինված է լարնալլովիկ տնհացող թարգմանությամբ:

Утилизация բառը թարգմանելիս բառարանի նեղիմասկները անհատականաբար պատճառներով հրաժարվել են մինչև այժմ ընդունված օգտագործված թարգմանությունից և սահմանափակվել են այդ բառը հալերեն ստեղծող գրելով՝ ուտիլիզացիա:

Жаростойкий բառը թարգմանելիս նեղիմասկները հրաժարվել են զրավոր և բանավոր խոսքում մինչև այժմ կիրառվող ճիշտ ջերմակայուն թարգմանությունից և այն փոխարինել են սխալ կրակակայուն թարգմանությամբ:

Нагретка բառը թարգմանելիս, ըստ երևույթին զերպարվելով հզամ բառը տերմինները փոխելու ձգտմամբ, բառարանից հանված է մինչև այժմ կիրառվող բեռ թարգմանությունը և այն փոխարինված է բեռնվածք թարգմանությամբ: Մենք չենք միտում, որ որոշ զեպքերում բեռնվածք բառն էլ կարող է հանդիսանալ нагретка բառի թարգմանություն, բայց զեպքերի մեծամասնության համար ավելի ճիշտ է բեռ թարգմանությունը:

Բառարան կազմողները հրատարակել են ЛЕДОКОЛ բառի մինչև այժմ կիրառվող ստացանալ թարգմանությունից և այն փոխարինել են ստացանալ թարգմանությունը երկարությունը բառի մինչև այժմ դրվում և արտասանվում է առանց ա հոգակապի երկաթեռնունը նրանց փոխարինել են երկարաբևուռով, իսկ ЖЕЛЕЗОБЕТОНОЕ ПЕРЕКРЫТИЕ արտահայտությունը թարգմանել են երկարաբևուռն ծածկ:

Հրատարակելով СЛОВАС բառի մինչև այժմ կիրառվող համաձայնվածը թարգմանությունից, որը նշանակում է համատեղ ձուլված, հեղինակները դրա փոխարեն ստացանալ են վիաճալվածը թարգմանությունը: Ըստ երևույթին նրանք հաշի են տակ այն հանգամանքը, որ համաձուլվածը ստանալու համար երկու կամ մի քանի մետաղներ իրար հետ պետք է հաշել, բայց համաձուլվածը կառուցվի միայն այն դեպքում, եթե իրար հետ հարված նյութերը միաձուլվեն: Մեր կարծիքով չպետք է հրատարակել համաձուլվածը տեղմանից և այն փոխարինել երևույթի էությունն ափսոսաբար արտահայտող վրաճալվածը բառով:

Բառարանի հեղինակները հրատարակել են նաև մինչև այժմ սպասարկվող և օրենքի ու ստացած նորմայ լարում և նորմայ արագացում տեղմաններից և դրանց փոխարինել են նորմալային լարում և նորմալային արագացում արտահայտություններով: Номинал (е) բառը լատինական (ֆրանսիական) ածական է, որը ստացվում է из латинского существительного (н) (е) վերածանցի սցենովվածը: Խարդկանց և երևույթներին վերագրելիս այն բառարանում էլ հանդես է գալիս որպես ածական: Օտար լեզվից վերցնել ածականը և նրա վրա ափսոսանք հայերեն լեզվի ածականների վերջավորությունը, երբ այդ բառի վերջավորությունն արդեն համընկնում է հայկական ածականների վերջավորությունների հետ, դուրս է տրամադրանական հիմքից: Եթե քառարանի հեղինակները հետևողական լինեին, ապա նրանք պետք է փոխեին նաև զիֆերնցիալ հաշիվ տեղմանը և այն դարձնեին զիֆերնցիալային հաշիվ:

Նման ձևով են վարվել բառարանի հեղինակները երկարացում (удлинение) և կարճացում (укорочение) տեղմանների հետ հորաբերական երկարացում (продолжительное удлинение), հորաբերական կարճացում (продолжительное укорочение) և նման արտահայտությունների մեջ: Նրանք ոչ երկու տեղմանները փոխարինել են երկարում և կարճում բառերով, որը մեր կարծիքով սխալ է:

Остаточный член տեղմանի մնացորդ անդամ թարգմանությունն ափսոսանք է, քան սցենարով մնացորդային անդամ թարգմանությունը:

Хрусткий բառի համար բառարանում տրված են բեկուց, սարք բառերը, բոլորովին մոռացված լինող այդ բառի հիմնական վիճակում թարգմանությունը:

Передитчик բառի թարգմանության համար բառարան կազմողները հրատարակել են մինչև այժմ կիրառվող հաղորդիչ բառից և այն փոխարինել են հաղորդակ բառով: Ըստ երևույթին այդ արված է проводить բառի թարգմանության հետ չփոփոխել համար: Իհարկե, արտոն էլ, ինչպես մնացած բոլոր դեպքերում, դարձյալ անաչաղություն հետևանքով телеинженерный персонал արտահայտությունը թարգմանելիս, նորից սցենարովված է հաղորդիչ բառը: Մեր կարծիքով բառարան կազմողներն ափսոսաբար կախված են տեղմաններն ընտրելիս ոչ թե աշխատեին հորինել դրանք բառերի մեջ

մեկ կամ երկու տասն փոխելով, ալլ օգտագործելին հալ կենցանի ընդուն: Օրբնակի, переставити բառի թարգմանություն համար կարելի էր փրցնել հայերեն առարկայ բառը: Բառարանում չի տրված сдвигавшее напряжение տերմինի թարգմանությունը, այն փոխարինվում է сдвигавшее напряжение տերմինի թարգմանությամբ՝ սահմանի բարձր:

Երևարարական մեխանիկային վերաբերող տերմիններում ամբի ճիշտ է сечением բառի թարգմանել կտրվածք, այն էլ ինչ համար, իսկ сечением արտահայտությունը՝ կտրումների մեղաց: Այդպիսով, մեր կարծիքով сечением բառի համար պետք է սույ երկու թարգմանություն՝ կտրվածք և ռավվածք, որոնցից երկրորդ թարգմանությունը վերաբերում է դժգրական երկրաչափության: Անհաջող է նաև арматура բառի ամրան թարգմանությունը, Մեր կարծիքով այդ բառի թարգմանություն համար պետք է խոյնել օգտագործող արմատուրա տերմինը, իսկ арматурка բառը պետք է թարգմանել երկաթալորում: Վստ է և сварка բառի երկ թարգմանությունը: Մասնականների մեծ մասը сварка բառը թարգմանում է զտում, թեև այդ տերմինը միաժամանակ հանդիսանում է և паяние բառի թարգմանությունը: Մեր կարծիքով консоли բառի համար պետք է թողնել կոնսոլ թարգմանությունը, բարձակ բառը թողնելով որպես кронштейн բառի թարգմանություն: Անհաջող է և висечный мост տերմինի կալի կամուրջ թարգմանությունը: Опора на катках արտահայտության համար ամբի ճիշտ կլիներ սույ թավալուկավոր մեկարան թարգմանությունը, բառարանում բերված ղլանվակավոր, մեկարան թարգմանության փոխարին: Միայն է полка բառի համար բառարանում տրված Ախա թարգմանությունը, ըստ երևույթին բառարան կազմողներին հայտնի չի եղել այդ բառի համար ամենայն հավանականությամբ Դ. Հակոբջանյանին պատկանող կողերիս թարգմանությունը, եթե այդ նրանց հայտնի լիներ, նրանք սահմանված չէին լինել парнобокий բառի ճիշտ հավասարակող թարգմանությունը փոխարինել միանգամայն սխալ հավասարակող թարգմանությամբ:

Մեր կարծիքով տեխնիկական տերմիններում պետք է հրամարվել возмущение բառի հազում թարգմանությունից և թողնել միայն զրգում թարգմանությունը: Անհաջող է նաև սброс բառի չափում թարգմանությունը, այն ամբի ճիշտ կլիներ փոխարինել չափազրում բառով: Անհասկանալի պատճառներով сдвиг бառի թարգմանությունների մեջ բացակայում է ուսայուն բառը:

Իհարկե, գրված բառերի ցուցակը կարելի է շարունակել, բայց մեր կարծիքով բերված բառերն էլ արդեն հնարավորություն են տալիս որոշ եզրակացություններ անել:

Մենք կցանկանալինք կանց ստնել բառարանի մի այլ առանձնահատկությունը: Բառարան կազմողները կատարելություն են հասել հայերեն լեզվին խորթ բարդ բառեր կազմելու մեջ: Նրանց կազմած բարդ բառերում բառի իմաստը կամ բույրովին կորչում է, կամ փոխարինվում է իրական մտքի հետ կապ չունեցող կամ նրան հակասակ մի նոր մտքով: Այսպես, օրինակ крапная точка արտահայտությունը թարգմանելիս, փոխանակ բաժարարմիլ լավագույնագույնի կիս պարզ և ճիշտ թարգմանությամբ, բառարանի հեղինակները ստեղծում են ոչինչ չարտահայտող նոր բառը տերմին՝ պատվիկավա:

Ինչպես հայտնի է, արմատը բառի անփոփոխ մասն է: Բայց բառ երևույ-

թին բյուրի կողմից ընդունված այս գրույթը բառարան կազմողները համարել են սխալ: Այդ պատճառով նրանք *усилитель, ускоритель, усноконтент* և րառերի մինչև այժմ կիրառվող ուժեղացուցիչ, արագացուցիչ, հանգստացուցիչ թարգմանաթյունները փոխարինել են ուժեղարար, արագարար, հանգստարար սխալ թարգմանաթյուններով: Ղեկավարվելով բառարան մշակողների սկզբունքներով մենք ստիպված կրենք նրա ուսուցիչ բառ փոխարինել ուսարարով, ներկայացուցիչ բառը ներկայարարով, և այլն:

Нецентрализованный механизм արտաճառաթյունը թարգմանելիս հեղինակներին չի բախարարել ոչ կենտրոնական մեխանիզմ պարզ թարգմանաթյունը, նրանք ավելի հարմար են գտել այն փոխարինել միանգամաչն սխալ արտաառանցք մեխանիզմ թարգմանաթյունը:

Центрально-сжатый элемент արտաճառաթյունը թարգմանելիս, հեղինակները նորից են որոշել սույ ինքնօրինակ թարգմանաթյուն, հրամարվելով կենտրոնական սեղմված տարր ճիշտ թարգմանաթյունից, նրանք այն փոխարինել են կենտրոնականով՝ սույ տարր արտաճառաթյունը, որն արդեն չի արտաճառում երևույթի էությունը:

Обеззараживание воды արտաճառաթյունը թարգմանելիս ճիշտ և ընդունված ջրի վարակազերծում թարգմանաթյուն փոխարեն հեղինակները տալիս են մեր կարծիքով սխալ ջրի ապալարակում թարգմանաթյունը: Նույնը կարելի է տեսլ նաև обратный раскок-ի մասին, այն բոլորովին էլ չի նշանակում հակաշեղմույր:

Միտլ է նաև закладка пучковой արտաճառաթյունը երկկալովածը դավ թարգմանաթյունը: Եթե դամը կարող է երկու տեղից կալվել, դա զեռ չի նշանակում, որ դամը երկու կտրվածք տնի: Ճարտքանչյուր դամ ունի անվերջ թվով կտրվածքներ:

Ինչ եղրակոցության կարելի է դալ, որինակ, կարդալով *деревца лептани и клетку* արտաճառաթյունը վանկակածն ժապավեններով նմում թարգմանաթյունը: Մեզ թվում է, որ հեղինակներին հարմին է, որ վանդակածն ժապավեններ չեն լինում:

Միանգամաչն պարզ է, որ равномерное относительное сужение նշանակում է հավասարաչափ նարարերական նեղացում, այլ ոչ թե հարարերական հավասարաչափ նեղացում, ինչպես տրված է բառարանում: Пролетное строение, балочное արտաճառաթյունը թարգմանվում է ձեծամույլին թուլչալյին կառուցվածք, այլ ոչ թե նեցամեջային նեծամույլին կառուցվածք: Ճիշտ նույնպես пролётное строение, рамное արտաճառաթյունը պետք է թարգմանվի շրջանակային թուլչալյին կառուցվածք, այլ ոչ թե նեցամեջային շրջանակավոր կառուցվածք, և այլն:

Փոքր ինչ ավելի բարեխիղճ վերաբերմունքի գնալում легированный чугун արտաճառաթյունը կարելի էր թարգմանել ալիլի ճիշտ, քան բառարանում տրված լեգիրված պողպատ թարգմանաթյունը: Նույնը կարելի է տեսլ և перепад температуры արտաճառաթյունը համար տրված քերվուրյան անկում թարգմանաթյուն և газонная цементация արտաճառաթյունը համար տրված գազային ցեմենտում թարգմանաթյուն մասին: Նույնը կարելի է տեսլ նաև подшипник качения радиально-упорный արտաճառաթյունը զլորման շարժա-նկնակային առանցքակալ (պետք է լինի պլորման շառավղա-հենակային առանցքակալ), ինչպես նաև форма консолидно-балочная ար-

տահալառություն րարոտկոսննարանայի՝ ֆերմա (պետք է լինի բարձակահեծանային ֆերմա) թարգմանությունների մասին:

Անուշադրություն պատճառով է բառարանում տեղ գտել նաև неопределённо сдвигающее արտահայտության սահող լայնում միանգամայն սխալ թարգմանությունը, ինչպես նաև саркастическая արտահայտության տերեղիկապարսկով կոչ տրամադժորեն հակադիր թարգմանությունը. և ոչինչ:

Վերջնական բառարանում չառ կան նկատված ու չնկատված վրիպակներ:

Հաշվի առնելով բառարանի կարեորակը և դերը, անհրաժեշտ է անհապաղ ստեղծել տեխնիկական տեխնոլոգիայի՝ մշտական գործող նոր հանձնաժողով, որը, հիմք ընդունելով ներկա բառարանը, կարողանա ստեղծել գործնական օգտագործման համար պիտանի բառարան: Կախյալն նոր բառարանի հրատարակությունը, այն պետք է հունձնել տարբեր մասնագետների, իսկ ավելի լավ է՝ լուհերի ամբիոնների և տեխնիկական գիտահետազոտական ինստիտուտների քննարկմանը:

Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ

Յապիս (72 X) 1957